

Երևանի Պետական Համալսարան

Կաժոյան Հրաչյա Ալբերտի

**Համայնքների ձևավորումը և զարգացումը հայ հասարակության քաղաքացիական
ինքնակազմակերպման գործընթացում**

**ԻԲ.00.03 – «Միջին մակարդակի տեսություններ, սոցիալական կառույցներ,
սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է. Ս. Մարգարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է. Ռ. Գրիգորյան

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ս. Վ. Աստվածատուրով

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական ճարտարագիտական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 21-ին, ժ. 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում, հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս. Ա. Զաքարյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Յուրաքանչյուր հասարակության պատմական զարգացման ընթացքում լինում են հանգուցային ժամանակաշրջաններ, երբ կենսապայմանների կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով ստեղծվում է նոր իրականություն: Այդ ժամանակ, սոցիալական գործընթացները կարգավորելու համար, անհրաժեշտ է դառնում հստակ գնահատել իրավիճակը և վերանայել առկա պատկերացումներն ու փորձը:

Խորհրդային անցյալում Հայաստանում զարգացման գործընթացները հիմնականում պլանավորվում և իրականացվում էին հեռավոր «կենտրոնից», իսկ ժողովրդավարական սկզբունքը ենթադրում է ևս մի գործընթաց, որը կազմակերպվում է «ներքևից՝ վերև» փոխներգործության եղանակով¹: Իրական ժողովրդավարությունը հնարավոր չէ կառուցել առանց այդ «ներքևից» փոփոխության մասնակցային գործընթացների, որ նախաձեռնվում են ընտանիքի, հարևանության և համայնքի մակարդակով²:

«Համայնք» հասկացությունը քաղաքացիական հասարակության բաղադրատարրի նշանակությամբ, երկրում դեռ նոր է արմատավորվում, մինչդեռ եվրոպական փորձագետների կարծիքով, հասարակությունն ամրապնդող համայնքային զարգացումը ժողովրդավարացման կարևոր գործոններից է³: Այն ստեղծում է հասարակության «գործվածքը»: Ստանձնելով պատասխանատվություն իրենց քաղաքական, սոցիալական ու տնտեսական ապագայի համար՝ մարդիկ ձեռք են բերում իրենց խնդիրների լուծման համար ռեսուրսներ բացահայտելու և ներգրավելու ունակություն:

Հետազոտության ընթացքում հիմնականում դիտարկվել են *տեղի* համայնքները, որոնց տարրերն են՝ տարածությունը կամ տեղը, նրանց անդամների համագործակցությունն ապահովող ինստիտուտները կամ կազմակերպությունները և սոցիալական փոխներգործությունը ընդհանուր հետաքրքրություն առաջացնող խնդիրների շուրջ:

Հայաստանում ժողովրդավարացման կարևորագույն նվաճումների թվում է տարբեր կազմավորումների՝ նորաստեղծ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և խմբերի կայացումը: Այսօր նոր մտեցումներ են անհրաժեշտ հասարակության ինքնակարգավորման խնդիրների ուսումնասիրության և համայնքների գիտական դիտարկման համար, նոր գիտելիքներ ու հմտություններ են պետք տեղական հիմնախնդիրների լուծմամբ զբաղվող համայնքային նախաձեռնությունների մասնակիցներին, տեղական ինքնակառավարման, համայնքային և պետական կազմակերպությունների ներկայացուցիչներին: «Ներքևից» զարգացող գործընթացների խթան-

¹ Տե՛ս **Held, D.** *Models of Democracy*, Cambridge: Polity Press, 2006, 225-230, **Eberly, D.** *The Rise of Global Civil Society*, New York: Encounter Books, 2008:

² Տե՛ս **Hambleton, R., Savitch, H., Stewart, M.** (eds.), *Globalism and Local Democracy: Challenge and Change in Europe and North America*, New York: Macmillan, 2003, էջ 9:

³ <http://www.cwc.ic/resources/community-development> [վերջ. այդ. 18.04.2013]

ման համար օրակարգայրին է դարձել երկրի ներսում կուտակված փորձը վերլուծելով և այս ճանապարհին արդեն անցած երկրներում առկա գիտելիքի շտեմարաններն օգտագործելով՝ նոր մոտեցումների և քաղաքականության մշակման հարցը:

Համայնքային զարգացման ուսումնասիրությունը կարևոր է նաև գլոբալ միտումների՝ հասարակական կազմակերպման նոր տեխնոլոգիաների և այսպես կոչված «գուգահեռ հասարակությունների» համատեքստում: Համախմբման երևույթները բազմատեսակ են և բազմաբնույթ. օրինակ, օրեցօր ստեղծվում են գերշահութաբեր համացանցային ընկերություններ, որոնց անդամները գործում են նույնիսկ անձամբ չճանաչելով միմյանց: Արդի հակագլոբալիստական շարժումը, միգրացիոն հոսքերը և աշխարհի տարբեր անկյուններում ահաբեկչական արարքների տարածումը առաջնահերթ են դարձնում ինքնակազմակերպման ընկալման նոր մոտեցումների և սոցիալական ու քաղաքական լուծումների որոնումը:

Այսպիսով, հետազոտության հրատապությունը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքներով: **Նախ**՝ համայնքային զարգացման վերաբերյալ գիտելիքները և մասնագիտական հմտություններն անհրաժեշտ են Հայաստանում քաղաքացիական հասարակության ու մասնավորապես, տեղական մակարդակով հիմնախնդիրների լուծման մշակույթի կայացման համար:

Երկրորդ՝ հանրային քաղաքականության զարգացման և ազգային որոշ կառույցների հայեցակարգերի մշակման համար անհրաժեշտ են որոշումների կայացման մասնակցային տեխնոլոգիաներ, որոնք զարգանում են քաղաքացիական ինքնակազմակերպման հիման վրա: **Երրորդ**՝ հանգամանքն էլ այն է, որ արդի գլոբալ գործընթացներն առաջացնում են համայնքային կազմակերպման նոր ձևեր, որոնց ուսումնասիրության համար նոր մոտեցումներ են պահանջվում:

Քաղաքացիական ինքնակազմակերպման և մասնավորապես՝ համայնքային զարգացման գործընթացի արդիականությունն ու գիտական թերի մշակվածությունը թույլ են տալիս ձևակերպելու որպես **գիտական հիմնահարց**, քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում համայնքների ձևավորման և զարգացման հարցը՝ այդ գործընթացներում մասնակցելու քաղաքացիների ցածր պատրաստվածության և ռեսուրսների սակավության պայմաններում: Եթե ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում համայնքային զարգացման գործընթացներում գլխավոր դերը հատկացվում է ներքին գործոններին՝ ինքնակազմակերպմանը, քաղաքացիների անձնական հետաքրքրությանը, կամավորությանը, ապա Հայաստանում քաղաքացիական հասարակությունը ձևավորվում է մեծ մասամբ օտարերկրյա օժանդակությամբ և պետության ինքնասահմանափակման միջոցով: Ընդ որում, ֆինանսական և այլ ռեսուրսների սակավության պատճառով, մարգերում այդ գործընթացն ավելի դանդաղ և դժվար է իրականացվում, քան մայրաքաղաքում:

Հիմնահարցի գիտական մշակվածությունը: Քաղաքացիական ինքնակազմակերպման երևույթի տարբեր հիմնահարցերը՝ քաղաքացու կարգավիճակը, պետական և հասարակական ինստիտուտների ու օրենքի փոխհարաբերությունները ուսումնասիրել են դեռևս Պլատոնը և Արիստոտելը: 17-րդ դարում քաղաքացիական հասարակության մասին նոր պատկերացումներ են ստեղծել Գրոցիոսը և դե Վիտորիան, Հոբբսը ստեղծել է քաղաքական փոխտնտեսությունը՝ սոցիալական պայմանագրի գաղափարը դնելով քաղաքացիական հասարակության ստեղծման հիմքում, իսկ Լոքը ձևակերպել է քաղաքացիական հասարակության գոյության իրավական սկզբունքները:

Լուսավորության դարաշրջանում Մոնթեսքյուն մշակել է քաղաքացիական ու քաղաքական ազատությունների հանրակարգման (ինստիտուցիոնալիզացիայի) գաղափարը, իսկ Ֆերգյուսոնը տարանջատել է քաղաքական և սոցիալական ոլորտները⁴:

Կանտը նկարագրել է համաշխարհային քաղաքացիական հասարակության հեռանկարը, Հեգելը վերլուծել է քաղաքացիական հասարակության գոյության սկզբունքներն ու փոխհարաբերությունները պետության հետ⁵, Գյուրկեյմը՝ սոցիալական համերաշխության, կամավորական խմբերի և կազմակերպությունների հիմնահարցը, Թոքվիլը հետազոտել է քաղաքացիական հասարակության կառուցվածքը, իսկ Գրամշին՝ դերը և զարգացման հեռանկարները⁶: Փարսոնը դիտարկել է քաղաքացիական հասարակությունը որպես սոցիալական համակարգ, որի արդյունավետությունը կախված է ոչ կառավարական ինստիտուտների փոխներգործությունից և անձի սոցիալիզացիայից տնտեսական, քաղաքական և իրավական ենթահամակարգերում: Գարենդոֆը վերլուծել է ռեսուրսների սակավությունից առաջացող խմբերի կոնֆլիկտը որպես հասարակության զարգացման պայման, Շտոմպկան զարգացրել է սոցիալական փոփոխության, իսկ իսկ Բուրդյեն և Փաթենը՝ սոցիալական կապիտալի գաղափարը⁷:

Համայնքային զարգացման արդի տեսությունները հիմնականում նկարագրական են և մասնատված⁸: Համայնքային զարգացումը սահմանելով որպես զբաղմունք, շարժում, մոտեցում կամ արժեհամակարգ, նրանք անդրադառնում են գործընթացի առանձին գործոններին՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական՝ այդ թվում նաև համե-

⁴ St' u **De Montecskye, III.** *O duxe zakonov*, M., Мысль, 1999, **Ferguson A.** *An Essay on the History of Civil Society*, Cambridge: Cambridge University Press, 2001:

⁵ St' u **Кант И.** *Метафизика нравов.* – М., Мысль, 1965, **Гегель Ф.** *Философия права*, М., Мысль, 1990:

⁶ St' u **Дюркгейм Э.** *О разделении общественного труда. Метод социологии*, М., Канон, 1996, **Де Ток-виль А.** *Демократия в Америке.* – М., 2000, **Граммши А.** *Тюремные тетради*, М., 1991:

⁷ St' u **Parsons, T.** *Social Systems and Evolution of Action Theory*, New York: Free Press, 1977, **Дарендорф Р.** *Современный социальный конфликт*, Иностранная литература, 1993, **Штомпка П.** *Социология социальных изменений*, М., 1996, **Bourdieu P.** *Forms of Capital*, New York: Greenwood, 1986, **Putnam R.** *Bowling Together*, New York: Simon and Schuster, 2001:

⁸ St' u **Gilchrist, A. and Taylor M.** *The Short Guide to Community Development*, Bristol: Policy Press, 2011, **Rubin, H.** *Renewing Hope within Neighborhoods of Despair*, Albany: State University of New York Press, 2000, **Robinson J. W. and Green G. P.** *Introduction to Community Development: Theory, Practice, and Service-Learning*, London: Sage, 2011:

ըաշխության-փոխօգնության, սոցիալական աշխատանքի, ու ֆեմինիստական շարժման և այլ հարցերին⁹: Սովորաբար այդ տեսությունների մշակման պատվիրատուները պետական կամ այլ ֆինանսավորող կառույցներն էին, իսկ նպատակն՝ այդ զարգացման գործակալների հանրային քաղաքականության, ծրագրերի կամ ռազմավարության հստակեցումը¹⁰: Ջեյմս Կուկի կարծիքով, պետական և հասարակական կազմակերպություններն ու փորձագետները սկսում և տասնամյակներ շարունակ իրականացնում էին համայնքների բարելավման այդ գործողություններն առանց տեսական որևէ ուղղորդման¹¹:

Քաղաքացիական հասարակության ուսումնասիրության մեջ զգալի ավանդ ունեն ռուս գիտնականները: Քաղաքացիական հասարակության պատկերացումները հետազոտել են Գրիդչինը, Գոլենկովան, Չերնիխը, Ռոմանենկոն, Վիտյուկը և այլոք¹²: Գրիգորյևն, Իվանովը, Նիկրեդինը և Պատրուշևը դիտարկում են հասարակական գործընթացների կառավարման ռազմավարական և սոցիալ-տեխնոլոգիական հարցերը¹³: Գրաբը, Սմիրնովը, Ֆեդուլինը և Խանանշվիլին ուսումնասիրել են սոցիալական համագործակցությունը, Կովալենկոն, Բաբունը, Եմելյանովը՝ տեղական ինքնակառավարումը¹⁴, իսկ Ադանբեգյանը վերլուծել է Ռուսաստանի տնտեսական փոփոխությունների ազդեցությունը սոցիալական զարգացման վրա¹⁵:

⁹ Տե՛ս **Checkoway, B.** *Core concepts for community change*. Journal of Community Practice, 1997 no.4, pp. 11-29, **Fawcett, S. B.** *Some Values Guiding Community Research and Action*. Journal of Applied Behavior Analysis, 24, no. 4 (1991), pp. 624-636, **Koven, S. and Lyons, T.** *Economic Development: Strategies for State and Local Practice*, 2nd ed. Washington: ICMA, 2010, **Tan, A.** *Community Development Theory and Practice*, Presented at: NACSW Convention, Indianapolis, October 2009, **Bhattacharyya J.** *Theorizing Community Development*, Community Development Journal, 2004 vol. 34, no. 2, pp. 5-34, **Ledwith, M.** *Community Development: A Critical Approach*, Bristol: Policy Press, 2011:

¹⁰ Տե՛ս **Ferguson, R. F. and Dickens, W.** *Urban problems and community development*, Washington: Brookings Institution Press, 1999:

¹¹ Տե՛ս **Cook, J.** *Community Development Theory*, Columbia: University of Missouri, 1994, էջ 2: Հասարակական գիտությունների մեղ մասնագիտական ճողավորման այդ միտումը և, դրա արդյունքում՝ գիտակրթական մշակույթի մասնատման երևույթը, որ դժվարացնում և երբեմն անհնարին է դարձնում արդի հիմնախնդիրների լուծումը, Է. Ս. Մարգարյանը բնութագրել է որպես «ճանաչողական ծուլակ»: Տե՛ս **Марквария Э.** *Феномен познавательной западни и перехода от специализированной к интегративной научно-образовательной культуре // Философские науки*, 2000, №3, էջ. 49-54:

¹² Տե՛ս **Витюк В., Голенкова З., Гридчин Ю., Черных А., Романенко Л.** *Становление гражданского общества и социальная стратификация // Социол. исследования*, 1995, № 6., стр.14-24, , **Черных А.** *Долгий путь к гражданскому обществу//Социол. исследования*, 1994, №8-9, стр. 173-181:

¹³ Տե՛ս **Григорьев С., Иванов В., Никредин Г., Патрушев В.** *Социальные технологии: Уч.-метод. пособие.* – Барнаул, 1999, **Иванов В., Патрушев В.** *Социальные технологии.* – М.: МГСУ, 1999, **Никредин Г.** *Социальные технологии в системе производственной деятельности.* Волгоград, 1992:

¹⁴ Տե՛ս **Граб В.** *Социальное партнерство*, М., Право и закон, 2000, **Кричевский Н., Гончаров С.** *Корпоративная социальная ответственность*, М., 2008, **Федулин А.** *Становление и развитие системы социального партнерства в России*, М., 1999, **Хананашвили Н, Зыков О., Якимец В., Доненко И.** *Социальная реформа: путь к гражданскому обществу*, М., 1997; **Коваленко Н.** *Местное самоуправление как форма демократии.* – Санкт-Петербург: ГУЭФ, 2008, **Бабун Р.** *Организация местного самоуправления.* – СПб.: Питер, 2005, **Емельянов Н.** *Местное самоуправление.* – Тула: ТИТИМУС, 1997:

¹⁵ Տե՛ս **Аганбегян А.** *Социально-экономическое развитие России.* – М.: Дело, 2004:

Օգտագործվել են նաև զարգացման հաղորդակցության տեսություններ, սոցիալական ցանցերի քննարկումներ, որոնք զգալի զիտական հետաքրքրություն են առաջացրել նաև Ռուսաստանում¹⁶ և էմպիրիկ հետազոտություններ:

Հայաստանում համայնքային զարգացման ուսումնասիրություններ են իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտում¹⁷, հասարակական կազմակերպությունների, զանգվածային հաղորդամիջոցների և այլ հարցերի շուրջ¹⁸: Սոցիալական համագործակցությանն է մվիրված ՄԱԿ-ի Մարդկային զարգացման 1997 թ. ազգային զեկույցը, իսկ կազմակերպական զարգացման և կազմակերպության մշակույթի հետազոտության ընթացքում օգտագործվել են մշակութաբանության սկզբունքները¹⁹: Սոցիալական փոխակերպման գործընթացը վերլուծվել է նաև քաղաքացիական հասարակության ձևավորման խնդիրների համատեքստում²⁰, օրինակ, գերդաստանի և դրացիական հանրությունների ձևով դրսևորվող հայկական համայնքային հասարակությունից քաղաքացիական հասարակության անցումը, սակայն քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացները, համայնքային զարգացման օրինաչափություններն ու մարզերում գործող համայնքային ինստիտուտները և տեղական խնդիրների լուծմանն ուղղված նրանց գործունեությունը Հայաստանում դեռ քիչ են ուսումնասիրված:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է՝ համայնքների ձևավորման և զարգացման գործընթացը հայ հասարակության քաղաքացիական ինքնակազմակերպման պայմաններում: Հետազոտության առարկան համայնքային զարգացման գործընթացի տեղական առանձնահատկություններն են, նրա պայմանները, ծագման և խթանման գործոնները:

¹⁶ Տե՛ս **Батыгин Г., Козлова Л., Свицерски А.** *Социальные науки в постсоветской России.* – Ин-т социологии РАН, Университет Фрибурга, М.: Акад. Проспект, 2005, **Градосельская Г.** *Сетевой анализ как метод исследования современных трансформаций*//Социально-экономическая трансформация в России, М., 2001, **Кастельс М.** *Информационная эпоха: экономика, общество, культура*, М.: ГУ-ВШЭ, 2000, **Сергеев В., Кузьмин А., Нечаев В., Алексеев Е.** *Доверие и пространственное взаимодействие социальных сетей*//Журнал «Полис», 2007 № 2, стр. 129-139:

¹⁷ Տե՛ս **Թումանյան Դ.** *Տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում*, Եր., «Նոյյան տապալան», 2006, և *Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (Գիրք 5)*, Եր., «Նոյյան տապալան», 2012, **Վազարյան Է.** *Տեղական ինքնակառավարման համակարգի 10 տարիները Հայաստանում*, Եր., 2007, *Տեղական ինքնակառավարման հիմունքներ* (խմբ. **Է. Օրդյան**), ուս. ձեռնարկ, Եր., «Պետական ծառայություն», 2000:

¹⁸ Տե՛ս <http://hdr.undp.org/en/reports/national/europethecis/armenia/name,2811,en.html> [վերջ. այց. 18.04.13], **Blue R. & Ghazaryan Yu.**, *Armenia NGO Sector Assessment*, Yerevan: World Learning, 2004:

¹⁹ Տե՛ս **Маркарян, Э.С.** *Наука о культуре и императивы эпохи*, М., 2000, **Айрапетян С., Кажоян Р., Саркисян Д.** *Качество мира*, Ер., Ноябрь 2002:

²⁰ Տե՛ս **Погосян Г.** *Современное армянское общество: особенности трансформации*, М.: Academia, 2005, **Ալեքսանյան Ա.** *Քաղաքացիական հասարակության ձևավորման նախադրյալները Հայաստանում*. ատեն. սեղմագիր, Եր., 2000, **Անդրեսայան Ճ.** *Շողովրդավարական անցման սոցիոլոգիական վերլուծության հիմնականիղիւղները*. ատեն. սեղմագիր, Եր., 2008, **Թադևոսյան Ա.** *Քաղաքացիական հասարակության հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում*, Եր., ՌԱՀՀԿ, 2000; **Թորոսյան Տ.** *Քաղաքացիական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա*. ատեն. սեղմագիր, Եր., 2008:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն էր մշակել տեսական և գործնական մոտեցումներ հայ հասարակության քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացի խթանման համար: Այդ նպատակին հասնելու համար հետազոտության ընթացքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- համակարգելով դիտարկումներն ու տեսամեթոդաբանական մոտեցումները, ձևակերպել համայնքային զարգացման գործընթացի տեսական հիմունքներ (համայնքային ձևավորման-զարգացման հավաքական հայեցակարգ և գործընթացի մոդել),
- պարզաբանելով երևույթի դիտարկման և գնահատման մոտեցումները, որոշակիացնել գործընթացի հիմնատարրերի չափորոշման օպտիմալ մեթոդները,
- վերլուծել համայնքային զարգացման փորձը Հայաստանի մարզերում և որոշել այդ գործընթացի առանձնահատկությունները, ուղղություններն ու խնդիրները,
- մշակել համայնքային զարգացման նախաձեռնությունների մասնակիցների և համայնքային կազմակերպությունների անդամների ադապտիվ պատրաստվածության բարձրացման գործնական ուղիներ:

Հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքը պայմանավորել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտի ու առարկայի բնույթը և հեղինակի փորձն ու գիտական դիրքորոշումը համայնքային զարգացման էության, պայմանների և քաղաքացիական ինքնակազմակերպման հետազոտման մոտեցումների վերաբերյալ: Հասարակական երևույթների ուսումնասիրության ընթացքում արդյունավետ է ինտեգրատիվ՝ տրանսդիսցիպլինար մոտեցումը, որը վերլուծությունն ազատում է միակողմանիության ռիսկից: Նման հետազոտությունների բարձր որակը և հուսալիությունը հնարավոր է ապահովել գիտության հարակից բնագավառների կապերի համակարգման և բարձր ու միջին մակարդակի տեսությունների զուգակցման միջոցով, որ հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն ներկայացնելու երևույթը՝ իր ամբողջ բարդությամբ և ներքին հակասություններով: Միևնույն ժամանակ, համապարփակության ձգտումն առանց էպիստեմոլոգիական դաշտի ճշգրտման, այն է՝ հետազոտման հիմնախնդիրների սեփական դիսցիպլինար շրջանակի սահմանման, կարող է բերել ստացված գիտելիքի կցկտորության և խոչընդոտ դառնալ ուսումնասիրվող երևույթի մասին ընդհանրական պատկերացման ստեղծման և առանձնահատկությունների, հեռանկարների ու արդյունքների ճշգրիտ գնահատման համար:

Այդ պատճառով, հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել քաղաքացիական հասարակության տեսության դասականների աշխատանքները, վերլուծության ընթացքում օգտագործվել են ավանդական կառուցվածքա-ֆունկցիոնալ և վերջին տարիներում ձևավորված դաշտի մոդելային մոտեցումը, արտարկման, հանրակարգային գնահատման և մոդելավորման մեթոդները:

Տեսական նյութը դիտարկվել է համեմատական վերլուծության և պատմական համեմատական մեթոդներով: Հետազոտության հիմք են ծառայել բնագավառում առաջատար արտասահմանյան ուսումնասիրությունները, դիտարկվել են տպագիր և էլեկտրոնային նյութեր, տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների ներքին շրջանառության փաստաթղթեր, բնագավառի փորձագետների և համայնքների անդամների հետ անցկացված հարցազրույցները:

Որպես մոտեցման գործնական կիրառման օրինակ՝ առենախտության հավելվածում տրված է 2009-2010 թթ. հեղինակի կողմից Շիրակի մարզում իրականացված համայնքային կազմակերպությունների հետազոտության ծրագիրը (N=30):

Հետազոտության հիմնական արդյունքը կայանում է.

- համայնքային զարգացման ընդհանուր տեսության հիմքերի ստեղծման,
- համայնքային զարգացման գործընթացի հավաքական մոդելի ու կառուցվածքային սխեմայի, և
- գործընթացի հիմնատարրերի գնահատման նոր մոտեցման առաջարկման մեջ:

Հետազոտության գիտական նորույթը ամփոփում են պաշտպանության ներկայացվող հետևյալ առաջադրված դրույթները.

• Մշակվել են համայնքային զարգացման գիտական ուսումնասիրության հայեցակարգի տեսական հիմքերը: Նոր տրանսդիսցիպլինար մոտեցմամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են համայնքային զարգացման գործընթացի հիմնատարրերը, որոնց խթանման միջոցով և համապատասխան պայմաններ ստեղծելով, կարելի է հզորացնել գործընթացը:

• Բնութագրվել է համայնքային զարգացման առաջնորդության երևույթը, հստակեցվել են առաջնորդի՝ որպես սոցիալական գործողության սուբյեկտի հատկանիշները և առաջարկվել են առաջնորդության գնահատման մեթոդներ:

• Մանրամասնորեն վերլուծվել է քաղաքացիական ինքնակազմակերպման մշակույթը և հիմնավորվել է հաղորդակցության դերը համայնքային զարգացման մեջ, մշակվել են մասնակցային հաղորդակցության ռազմավարության առաջարկություններ, կիրառվել և տեղական պայմաններին են հարմարեցվել մասնակցային պլանավորման, զարգացման կանխատեսման, համայնքի քարտեզավորման և այլ մեթոդներ:

• Բազմակողմանիորեն վերլուծվել է համախմբման երևույթը և հիմնավորվել է կամավորության դերը համայնքային զարգացման գործընթացում:

• Հիմնավորվել է հանրակարգային զարգացման գործոնը, բնութագրվել է համայնքային կազմակերպությունների դերը և սոցիալական փոփոխության գործընթացի նախապայման՝ «սովորող կազմակերպություն» երևույթը:

Շիրակի մարզում իրականացված համայնքային կազմակերպությունների բազմակողմանի հետազոտության արդյունքում ապացուցեց, որ թեև, տարածված կարծիքի

համաձայն, համայնքային կազմակերպություններին հատուկ է կառուցվածքային ցածր զարգացածությունը, հանրակարգային ավելի բարձր զարգացում ունեցող կազմակերպություններում ավելի շատ են շահառուները և կամավորները և ավելի բարձր է նրանց գործունեության պահանջարկը համայնքում: Հետևողականորեն պլանավորելով և իրականացնելով կառուցվածքային զարգացման գործընթացը, կարելի է ընդլայնել նրանց ներգրավվածությունը համայնքային խնդիրների լուծման մեջ:

Հետազոտության գիտագործնական նշանակությունը կայանում է հետևյալում.

- Ստեղծված ամբողջական մոտեցմամբ վերստուգվում և հիմնավորվում է քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում՝ համայնքային զարգացման նախաձեռնողների ադապտիվ պատրաստվածության և համայնքային կազմակերպությունների հանրակարգային կարողությունների զարգացման նորմատիվ-արժեքային, ճանաչողական, գործունեական, սոցիալ-տեխնոլոգիական և այլ չափանիշները:

- Համայնքային զարգացման առկա հետազոտությունները հիմնականում նկարագրական բնույթ ունեն²¹ և կենտրոնացած են գործընթացի առանձին տարրերի ուսումնասիրության վրա: Նրանց նպատակը հաջողության կամ անհաջող փորձի վերլուծությունն ու համակարգումն է, մինչդեռ կտրուկ փոփոխվող իրականությունն պայմաններում, երբեմն անօգուտ է լինում մույնիսկ այդ փորձը: Ուսումնասիրության նման մեթոդների համեմատ, այս հետազոտության ընթացքում մշակված մոտեցումը հիմք է ստեղծել համայնքային զարգացման գործընթացների ամբողջական վերլուծության և նրանց կայունացման ու, առհասարակ, քաղաքացիական հասարակության կառույցների ամրապնդման ուղիներ մշակելու համար՝ օժանդակման քաղաքականության և գործընթացի ներքին ու արտաքին գործոնների խթանման ծրագրերի միջոցով:

- Հետազոտության տեսական դրույթները, մեթոդաբանական մոտեցումներն ու եզրակացությունները օգտագործվել են պետական և տեղական հանրային ու կադրային քաղաքականության մշակման համար²²: Տեսության համապարփակ բնույթի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այն հաջողությամբ գործադրվել է նաև հետպատերազմյան կոնֆլիկտի պայմաններում ձևավորվող բազմաէթնիկ համայնքների զարգացման կառավարման համար՝ խաղաղարար գործողությունների ընթացքում²³:

²¹ Տե՛ս, օրինակ՝ **Mattessich, P. and Monsey, B.** *Community Building: What Makes It Work; A Review of Factors Influencing Successful Community Building*, Saint Paul: Wilder, 2004, **Green G. and Haines A.** *Asset Building & Community Development*, London: Sage, 2011, **Wolff T.** *The Power of Collaborative Solutions: Six Principles and Effective Tools for Building Healthy Communities*, San Francisco: Jossey Bass, 2010, **Phillips R. and Pittman R.** (eds.) *An Introduction to Community Development*, New York: Routledge, 2009:

²² Տե՛ս **Antonian Yu.** *Community-based Organizations: Strategies for Sustainability*, Policy Brief #13, William Davidson Institute, Ann Arbor: University of Michigan, 2005, 104, **Phillips R.** *Editor's Comments*, Community Development, 2012 No.43/2, London: Routledge, pp. 131-132.

²³ Տե՛ս **Kazhoyan H.** *A General Theory of Community-building in Its Application in a Multi-ethnic Setting: The Kosovo Case*, Community Development, 2012 No.43/2. London: Routledge, pp. 225-243, **Kazhoyan H.** *Multicultural Community Building in Kosovo*, Unversum Journal, Prishtina: Unversum, 2008, №1, pp. 73-81:

Աշխատանքի նյութերը օգտակար կլինեն համայնքային զարգացման և քաղաքացիական հասարակության հետագա հետազոտությունների, ուսանողների, փորձագետների և հասարակական կազմակերպությունների անդամների մասնագիտական պատրաստման և ուսումնական ձեռնարկների մշակման համար²⁴:

Արդյունքների փորձաքննությունը: Համայնքային զարգացման գործընթացը հասկանալու, արդյունքները կանխատեսելու և հակազդող գործոնները գնահատելու համար ժամանակակից գիտելիքներ են հարկավոր: Փորձը ցույց է տալիս, թե որքան դժվար է, երբեմն անհնար, օտարերկրյա մոդելների կիրառումը կամ «վերևից» փոփոխությունների իրականացումը Հայաստանի պայմաններում: Ի տարբերություն Ռուսաստանի կամ այլ երկրների, որտեղ մի քանի կարգավորող օրենքով կամ մախազահական որոշումներով հնարավոր է կենսագործել լուրջ բարեփոխումներ, մեր իրականությանը բնորոշ են այլ ցուցանիշներ, օրինակ՝ լավ գրված, բայց չգործող օրենքներ: Տեղական փորձից ելնելով մշակված օրենքները իսկապես ավելի կենսունակ են, քան բառացիորեն թարգմանված «կատարյալ» օտար օրենսդրական ձևակերպումները. ժողովրդավարացման ընթացքում առավել արդյունավետ են «ներքևից՝ վերև» մոտեցումները, օրինակ՝ «Գործարարների միության» օրենսդրական մախազածերը կամ «Համայնքների ֆինանսիստների միության» կողմից մախաձեռնած ՀՀ տեղական ինքնակառավարման հայեցակարգի ու ապակենտրոնացման ռազմավարության մշակումը:

«Ներքևից՝ վերև» փոփոխության բացառիկ երևույթներն ուսումնասիրելու համար հարկավոր էր կազմակերպել մասնակցային գործընթաց, որը հնարավոր դարձավ Մախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի Գ-յումրու մասնաճյուղի «Քաղաքացիական հասարակության դպրոցում» «Հաղորդակցություն սոցիալական փոփոխության համար» ուսումնական ծրագրի շրջանակներում (2003-2006): Այդ ընթացքում հեղինակը հանրակարգային զարգացման դասընթաց անցկացրեց մախարային ամենաընդարձակ կազմակերպություններից մեկի՝ «Հասարակական երկխոսությունների և մախաձեռնությունների կենտրոնի» համար:

Այդ ծրագրերը հնարավորություն ընձեռեցին տեսական նյութերը և հասարակական կազմակերպությունների փորձը քննարկելու, արտասահմանում լայնորեն կիրառվող որոշ մեթոդներ տեղայնացնելու և հետազոտության գործնական մոտեցումները փորձարկելու: Մասնավորապես, սկզբունքորեն կատարելագործվեց համայնքի քարտեզավորման մեթոդը, մշակվեցին ուսումնական ձեռնարկներ, լսարանային դասավանդման և գործնական առաջադրանքների հայեցակարգեր:

²⁴ Մասամբ արդեն օգտագործվել են (տե՛ս **Կաժոյան Հ.** *Համայնքային զարգացումը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում* (ուս. ձեռնարկ), Եր., 2009, **Կաժոյան Հ.** *Հաղորդակցություն սոցիալական փոփոխության համար. Ցանցային համագործակցության հիմունքներ* (ուս. ձեռնարկ), Եր., Լուսակն, 2004):

2000-2013 թթ. կատարված հետազոտության արդյունքները փորձարկվել են մասնաճյուղային խորհրդատվությունում գեկույցների և ելույթների, Հայաստանում և արտասահմանում տպագրած գիտական աշխատությունների միջոցով:

Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի սոցիոլոգիայի բաժնում:

Ատենախոսության ընդհանուր կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (9 ենթագլուխ), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Աշխատության ծավալը 144 էջ է, ներառյալ 17 գծապատկեր, 8 աղյուսակ, օգտագործված գրականության և համացանցի աղբյուրների ցանկը՝ 232 հղումներով և 1 հավելված՝ 16 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, հստակեցվում են հետազոտության հիմնահարցը, նպատակն ու խնդիրները, հակիրճ բնութագրվում է գիտական նորույթը, նշվում գիտագործնական նշանակությունը:

Առաջին՝ **«Համայնքային զարգացումը Հայաստանում»** գլխում քննարկվում են համայնք, քաղաքացիական հասարակություն, սոցիալական փոփոխություն, սոցիալական կապիտալ երկետային հասկացությունները և համայնքային զարգացման գործընթացի առանձնահատկությունները Հայաստանում:

Գլուխը բաղկացած է եկու ենթագլուխից: **«Համայնք, քաղաքացիական հասարակություն, սոցիալական կապիտալ»** ենթագլուխում ներկայացվում են «համայնք» հասկացության տարբեր ընկալումներ և դիտարկվում են համայնքների տեսակները, որոնցից որոշակիացվում և սահմանվում է վարչատարածքային իշխանության միավորը:

Ատենախոսության մեջ համայնքները դիտարկվում են որպես քաղաքացիական հասարակության կազմակերպված խմբեր, որոնք, ձևավորվելով սոցիալական փոփոխությանն ուղղված հիմնահարցերի լուծման գործընթացում, զարգացնում են քաղաքացիական հասարակության կարողությունները, իսկ քաղաքացիական հասարակությունը՝ որպես պետությունից անկախ գործող, բայց պետության հետ համագործակցող, հասարակական ինստիտուտների և հարաբերությունների համակարգ, որի խնդիրն է անհատների և խմբերի ինքնաիրականացման պայմանների ստեղծումը և մասնավոր՝ անհատական ու կոլեկտիվ հետաքրքրությունների և կարիքների բավարարումը:

Քաղաքացիական հասարակության պատկերացումների պատմական զարգացման քննարկմամբ հիմնավորվում է երևույթի հետագա դիտարկման անհրաժեշտությունը սոցիալական և քաղաքական տիրույթներում, քանի որ ժողովրդավարական ինստիտուտների հաջողությունը կամ ձախողումը մախ և առաջ կախված է քաղաքացիական

հասարակության կառույցների արձագանքելու ունակությունից, որը դրսևորվում է քաղաքացիական և քաղաքական միավորումների միջոցով քաղաքացիների պահանջները լսելով, միջամտելով և հասցեագրելով, հիմնախնդիրները լուծելու կարողությունից: Յուրաքանչյուր համայնքում յուրովի է «արտադրվում» սոցիալական կապիտալը:

Սոցիալական կապիտալի ընկալումների քննարկման ընթացքում նշվում է Փաթնեմի²⁵ տարանջատումը, ըստ որի «կապող» սոցիալական կապիտալը միացնում է միևնույն, իսկ «կամրջողը» տարբեր սոցիալական կամ տնտեսական կարգավիճակի, քաղաքական դիրքորոշման, մասնագիտության, ազգի կամ ռասայի մարդկանց, ընդամենը ընդլայնելով անհատների ինքնությունն ու փոխըմբռնումը:

Երկրորդ՝ «*Համայնքային զարգացման գործընթացը Հայաստանում*» ենթագլխում, վերլուծելով տարբեր մարզերում համայնքային զարգացման երևույթի առանձնահատկությունները քաղաքացիական ինքնակազմակերպման համատեքստում՝ հեղինակը հիմնավորվում է, որ Հայաստանում այն տեղի է ունենում երկու հանդիպական գործընթացների միջոցով: Մի կողմից, իշխանության ապակենտրոնացման միջոցով կենտրոնական իշխանությունը դեպի տեղական մարմիններ է տեղափոխում իր լիազորությունների որոշակի մասը, վարչատարածքային իշխանության միավորները «համայնքներ» անվանելով և ինքնասահմանափակվելով զարգացնում է տեղական ինքնակառավարման մեխանիզմները: Իսկ հակադարձ ուղղությամբ, «ներքևից» ձևավորվում է քաղաքացիական հասարակությունը, ստեղծվում և զարգանում են քաղաքացիական նախաձեռնությունների խմբերը, համայնքներն իրենց ինստիտուտներով՝ համայնքային կազմակերպություններով: Նրանք խթանում են հանրային մասնակցությունը, պարտադրում են տեղական իշխանություններին լինել ավելի թափանցիկ և պատասխանատու, զարգացնում են բնակչության կարիքներին արձագանքելու և խնդիրները տեղական ուժերով լուծելու կարողությունը:

Ենթագլխում մանրամասնորեն վերլուծվում են մարզերում համայնքային զարգացման խնդիրներն ու կարիքները, նշվում է, որ տեղական ինքնակառավարման միավորները ձևավորվել և զարգանում են օրենքով իրենց համար նախատեսված կառուցվածքա-գործառնության մոդելի և իրենց գործունեությունը ապահովելու նպատակով պետության կողմից հատկացվող ֆինանսական և այլ միջոցների հիման վրա, և, վերլուծելով հասարակական կազմակերպությունների և փորձագետների կարծիքները²⁶, հեղինակը եզրակացնում է, որ օրենսդրական դաշտի անկատարությունը Հայաստանում տեղական ինքնակառավարման հիմնական խնդիրներից է: Ընդ որում, տեղական ինքնակառավարման լիազորությունները և դրանց իրականացման համար ծախսվող

²⁵ Տե՛ս **Putnam R.** *Bowling Alone*, New York: Simon and Schuster, 2001, էջ 22-23:

²⁶ Տե՛ս **Գիմիշյան Ս.** *Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. Քաղաքականության տարբերակներ և ուղիներ*, Եր. Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004:


ֆինանսական միջոցները դեռևս բավականին փոքր են նախկին սոցիալիստական երկրների համեմատ²⁷, իսկ **տեղական բյուջեների տեսակարար կշիռը շատ ցածր է հանրային ծախսերում և ՀՆԱ-ում**: Միջոցների սակավության պայմաններում կարևորվում է տեղական մակարդակով նրանց ներգրավման խնդիրը, որն ատենախոսության մեջ դիտարկվում է զարգացման գործընթացներ նախաձեռնելու համայնքների կարողության համատեքստում:

Երկրորդ՝ **«Համայնքային զարգացման գործընթացը և նրա հիմնական տարրերը»** գլխում քննարկվում են գործընթացի հիմնատարրերի ուսումնասիրության մեթոդները և խթանման մոտեցումները: Առաջնորդության, կամավորության և հանրակարգային զարգացման հարցերը և ռեսուրսների կառավարման խնդիրները դիտարկելիս, քննարկվում են նրանց վիճակի էմպիրիկ հետազոտման մեթոդները և ընթացքի ու միտումների գնահատման գործիքները, պարզաբանվում է կազմակերպման սեմիոտիկ մոդելը և կազմակերպական մշակույթ հասկացությունը, ինչպես նաև գիտելիքների կառավարման տեսակետից կարևոր՝ «սովորող կազմակերպության» երևույթը, դիտարկվում են նաև հաղորդակցությունն ու ցանցային համագործակցությունը:

«Համայնքային ճակտորման-զարգացման գործընթացի մոդելը և նրա տարրերը»

2.1. ենթագլխում, տարիների ընթացքում մարզերում կուտակված և արտասահմանյան փորձի ամփոփ վերլուծությանը, հիմնավորվում է ատենախոսության հիմնական դրույթը. **Համայնքային զարգացման գործընթացն ունի հանգուցային տարրեր, առանց որոնց այն չի կարող տեղի ունենալ**: Դրանք են՝ **առաջնորդությունն ու սոցիալական փոփոխության համար հաղորդակցության միջոցով՝ համախմբումը և, հանրակարգային զարգացումն ընթացքում, պլանավորումը, ռեսուրսների կառավարումն ու հաշվետվությունը** (Պատկեր 1.):

Պատկեր 1. Համայնքային զարգացման գործընթացի հավաքական մոդել



²⁷ Տե՛ս **Թումանյան Գ.** Ապակեներդրուցումը և տեղական ինքնակառավարման համակարգի հեռանկարը Հայաստանում, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004:

Փորձը ցույց է տալիս, որ խթանելով այդ գործոնները և համապատասխան պայմաններ ստեղծելով, կարելի է հզորացնել համայնքային զարգացման գործընթացը, իսկ այդ գործոններից յուրաքանչյուրի անտեսումը կամ թերագնահատումը խոչընդոտում և դադարեցման վտանգի է ենթարկում ամբողջ գործընթացը:

Հետազոտության ընթացքում ստեղծված համայնքային զարգացման գործընթացի մոդելը մեթոդաբանական նշանակություն ունի. այն հնարավորություն է տալիս ըմբռնելու գործընթացն իր ամբողջականությամբ և վերլուծելու նրա առանձին հիմնատարրերը, դրանց փոխկապվածությունն ու փոխազդեցությունը:

Այդ հիմնատարրերին են նվիրված երկրորդ գլխի հաջորդ ենթագլուխները: Մասնավորապես, սոցիալական փոփոխության տեսական պատկերացումները **«Սոցիալական փոփոխության հայեցակարգը»** 2.2. ենթագլխում քննարկելիս, նշվում է, որ սոցիոլոգիայի կարևոր սկզբունքներից մեկի՝ ռեֆլեքսիայի համաձայն, մարդկային հասարակության մեջ գիտելիքներն ունեն ուղղակի և անուղղակի գործնական հետևանքներ և այն, ինչ մարդիկ մտածում են փոփոխության մասին, իրենց գործողությունների է դրդում: Հետևաբար, որքան հարուստ լինեն այդ աղբյուրները, որքան բազմազան լինեն տեսությունները և մոդելները, այնքան ավելի գիտակցված կլինեն անհատների, խմբերի, կազմակերպությունների, և կառավարությունների գործողությունները: Հետևաբար, **սոցիոլոգիական գիտության մասշտաբներն ու խորությունը հանդիսանում են հասարակության ճակատագրի ձևավորման կարևոր գործոն:**

Հաջորդ՝ **«Առաջընթաց և առաջնորդ»** 2.3. ենթագլխում վերլուծության առարկա են սոցիալական առաջընթաց և համայնքային զարգացման առաջնորդ հասկացությունները: Առաջընթացի սոցիալ-փիլիսոփայական համեմատական վերլուծությունն իրականացվում է ակսիոլոգիայի, դաշտի, մորֆոգենետիկ կառուցման և այլ տեսությունների շրջանակներում: Այդ մոտեցումներից առանձնացվում է մորֆոգենետիկ կառուցման տեսության դիտարկումը, որի համաձայն սոցիալական առաջընթացը ոչ թե որևէ կոնկրետ գործընթացի վերջնական նվաճում է, այլ պոտենցիալ ընդունակություն, այդ գործընթացի դինամիկ, էվոլյուցիայի ընթացքում փոփոխվող հարաբերական ներքին որակ և ոչ թե բացարձակ, ընդհանուր չափման արտաքին ստանդարտ՝ ոչ թե զարգացման անհրաժեշտ ու անխուսափելի միտում, այլ պատմական հնարավորություն, բաց ընտրություն, անհատական և կոլեկտիվ գործողությունների արդյունք:


Համայնքային զարգացման առաջնորդ–համախմբող հիմնատարրը նույնպես որոշակիացվում է մորֆոգենետիկ սկզբունքներով: Գործնական դիտարկումների և համապատասխան գրականության վերլուծությամբ ապացուցվում է, որ որքան էլ փոփոխության կարիքը գիտակցված լինի համայնքում, գործընթացը չի կարող տեղի ունենալ, մինչև չհայտնվի առաջնորդը՝ սոցիալական փոփոխություն իրականացնելու համար պատասխանատվություն ստանձնելով և մարդկանց ներգրավի խնդիրների

լուծման գործընթացում: Այդ պատասխանատվությունը համայնքի ատրիբուտն է, այն ենթադրում է հաշվետվություն ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Այնուհետև, համայնքային զարգացման «առաջնորդի» պատկերացումը որոշակի-ացնելու նպատակով, սոցիալական գործունեության սուբյեկտին որպես առաջնորդ բնութագրող հատկանիշները բաժանված են երկու խմբի: Առաջին խմբի փոփոխականները կազմում են շարժառիթների ամբողջականությունը և որոշում են, արդյոք մարդիկ ձգտում են փոխել իրենց հասարակությունը, թե ոչ, իսկ երկրորդ խմբի փոփոխականները վարքային հնարավորություններն են՝ կարող են նրանք գործել, թե ոչ: Առաջնորդի խնդրի այս դիտարկման արդյունքը շարժառիթների և վարքային հնարավորությունների գումարն է, այսինքն՝ սոցիալական գործողության սուբյեկտը կարող է առաջնորդ դառնալ, եթե նա ցանկանում է և կարող է գործել, իսկ **նրա թերևս ամենակարևոր հատկանիշը ինքնագերազանցման ձգտումն է՝** սեփական սահմաններից դուրս գալու և դժվարությունների հաղթահարման ընդունակությունը:

Անհատական զարգացման այս սկզբունքը դիտարկելով կազմակերպական զարգացման և, հետևաբար՝ նաև սոցիալական փոփոխության գործընթացների հիմքում, հետազոտության արդյունքում մշակվել է նաև համայնքային զարգացման կառուցվածքային սխեման, որի համաձայն, կառուցվածքի տեսանկյունից, համայնքային զարգացման գործընթացը ենթադրում է **անհատական, կազմակերպական և հասարակական այդ 3 շերտերի ներդաշնակ փոխկապակցվածություն** և երբ նրանցից որևէ մեկը դառնում է գերիշխող, զարգացման գործընթացը շեղվում է իր նպատակակետից և դառնում անարդյունավետ (Պատկեր 2.):

Պատկեր 2. Համայնքային զարգացման մակարդակները



Ատենախոսության մեջ կարևոր տեղ է հատկացված համայնքային զարգացման գործընթացի տարրերի գնահատման առկա մեթոդների և դրանց տեղայնացման ու կիրառման փորձի համեմատական վերլուծությանը: Առաջնորդություն, օրինակ, առաջարկվում է գնահատել Փոնտիսի հիմնադրամի CARD համակարգի կամ «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության «Զարգացման գործընթացի բնութագրա-

կան գնահատման գործիքի» օգնությամբ, որոնք ուսուցանվել են «Համայնքների ֆինանսիստների միության», «Հայ կանանց հանրապետական խորհրդի» և այլ կազմակերպությունների անդամներին, տեղայնացվել և կիրառվել են կազմակերպական զարգացման ռազմավարության մշակման գործնական պարապմունքների ընթացքում:

«Համայնքում՝ կամավորության զարգացում» 2.4. Ենթազխում մանրամասնորեն դիտարկվում են կամավորության հիմնախնդիրն ու նրա դերակատարությունը համայնքային զարգացման գործընթացում, հատկապես ֆինանսական ռեսուրսների սակավության պայմաններում: Կամավորության դիտարկված սահմանումների ընդհանրացման միջոցով, հետազոտության ընթացքում որոշակիացվել են նրանց սկզբունքային բաղկացուցիչները. կամավոր աշխատանքն իրականացվում է ըստ ցանկության՝ առանց պարտադրանքի, առանց դրամական վարձատրության (թեև չի բացառվում իրական ծախսերի հատուցումը) և հօգուտ այլոց: Կամավորությունը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացներին ներգրավվելու մարդկանց պատրաստության չափանիշն է: Կամավորության կառավարումը կարևոր է կազմակերպական զարգացման համար. կամավորների ներդրումն ավելացնում է զարգացման ծրագրերի արդյունավետությունը և ապահովում նրանց շարունակականությունը:

«Կազմակերպական մշակույթը և հանրակարգային զարգացումը» 2.5. Ենթազխում քննարկվող հանրակարգային զարգացումը համայնքի ձևավորման հիմնական գործոններից է: Այն հատուկ ուշադրություն է պահանջում քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացի վերլուծության և պլանավորման ընթացքում: Կազմակերպական մշակույթի երեք մակարդակների՝ արտեֆակտների, հռչակված արժեքների և հիմքային պատկերացումների ուսումնասիրությունը առաջարկելով որպես սոցիալական փոփոխության իրականացման ուղու կարևորագույն սկզբնական քայլ, հեղինակը նշում է, որ **ուղղորդված հանրակարգային զարգացումը ապահովում է կազմակերպության ունակությունը՝ անընդհատ փոխվող արտաքին աշխարհին հարմարվելու, ինչպես նաև այն փոխելու կարողությունը:** Ներկայացված են նաև հանրակարգային զարգացման գործընթացի գնահատման մոտեցումներ, որոնք անընդհատ վերամշակման մեջ են, օրինակ՝ «Համաշխարհային ուսուցման» վերոնշյալ գործիքը:

«Պլանավորում և ռեսուրսների կառավարում» 2.6. Ենթազխում ֆինանսական և այլ միջոցների ներգրավման խնդիրների թվում, դիտարկվում են «հավասարակշռված համագործակցություն» (կամ կյանքի որակի եռանկյունի) կոչված մոդելը, դրամահավաքի սկզբունքները, վեր են հանվում ոչ միայն ֆինանսական, այլև մարդկային, տեղեկատվական, նյութական միջոցների (ապրանքներ, տարածք), տեխնոլոգիաների, ծառայությունների պլանավորման և իրականացման եղանակները: Գիտելիքների կառավարման հիմնախնդրի համակողմանի վերլուծությամբ՝ ամփոփվում է **«սովորող կազմակերպություն» հասկացությունը՝ որպես համայնքային զարգացման նախադրյալ:**

Վերջին՝ 2.7. «**Հաղորդակցություն**» ենթագլխում կատարվում է զարգացման հաղորդակցության տեսական պատկերացումների համակողմանի քննարկում: Հաղորդակցությունը առանցքային նշանակություն ունի համայնքային զարգացման գործընթացում, քանի որ վերջինս տեղի է ունենում սոցիալական փոփոխության նպատակով իրականացվող հաղորդակցության միջոցով:

Էմպիրիկ դիտարկումների միջոցով բացահայտվեց, որ հաղորդակցություն ընթացքում, համայնքի անդամները գիտակցում են, որ իրենց համախմբված գործողությունները ենթադրում և, արդյունքում՝ առաջացնում են իշխանության վերաբաշխում: Հետևաբար, **հարկավոր է ճիշտ գնահատել նաև գործընթացին հակազդող ուժերի տեղաբաշխումը**: Նման վերլուծության համար առաջարկվում է օգտագործել մանրամասնորեն նկարագրված համայնքի քարտեզավորման մեթոդը, որը հեղինակը մշակել և փորձարկել է Գ.յումրու Քաղաքացիական հասարակության դպրոցում:

Հաղորդակցման գործընթացում զարգանում է համայնքի խնդիրներ լուծելու կարողությունը, համայնքի անդամները հնարավորություն են ստանում ձևավորելու և փորձարկելու իրենց գաղափարներն ու մտեցումները՝ ներգրավելով նաև այն փորձագետներին ու «վերևից» պլանավորման մասնագետներին: Մասնակցային նման գործընթացները օժանդակում են համայնքի ներքին ժողովրդավարական գործընթացի ուժեղացմանը և, միևնույն ժամանակ, հնարավորություն տալիս տեղայնացնելու կենտրոնից իրականացվող տարածաշրջանային ծրագրերը:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները, որոնցից առավել կարևորներն են.

1. Ուսումնասիրության շրջանակում մշակված տեսական հայեցակարգի համաձայն, համայնքային զարգացման գործընթացի հիմնական տարրերն են. առաջնորդությունը, համախմբումն ու կամավորությունը, հանրակարգային զարգացումը, պլանավորումը և ռեսուրսների կառավարումը: Այս բաղադրիչների համաչափ զարգացումը ստեղծում է սոցիալական փոփոխության կայուն մեխանիզմի հիմքը, մինչդեռ դրանցից յուրաքանչյուրի թերագնահատումը կամ անտեսումը խոչընդոտում ու դադարեցնում վտանգի է ենթարկում ամբողջ գործընթացը:

2. Համայնքների զարգացման խոչընդոտներից է անկատար օրենսդրական դաշտը և տեղական բյուջեների ծայրահեղ ցածր տեսակարար կշիռը հանրային ծախսերում և ՀՆԱ-ում: Այս իրականությունը համայնքներին պարտադրում է զարգացնել մասնակցային պլանավորման, ինչպես նաև ֆինանսական և այլ ներքին ու արտաքին ռեսուրսների ներգրավման ու արդյունավետ օգտագործման կարողությունը:

3. Այդ հրամայականի հետ մեկտեղ կարևոր է փոխվող արտաքին աշխարհին հարմարվելու և այն փոխելու կարողության զարգացումը, որի գրավականներից է գիտելիքների ստեղծման և կառավարման ունակությունը: Սովորող կազմակերպու-

թյունը սոցիալական փոփոխության գործընթացի նախապայմանն է: Հետազոտությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր համայնք, ներգրավելով առկա տեղական և արտաքին միջոցները, ստեղծում է սոցիալական փոփոխության իր «էնդեմիկ» մեխանիզմը, որի կենսունակության հիմնական երաշխիքը համայնքի անդամների իրազեկությունը, գիտելիքներն ու համագործակցության փորձն են:

4. Արդյունավետ զարգացման ռազմավարության մշակման գործում պարտադիր պայման է մասնակցային հաղորդակցության մշակույթի *գիտական* և *փորձագիտական* ըմբռնումը՝ տեղական մակարդակով զարգացման առաջնահերթությունների հստակեցման, սակավ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և արտաքին ուժերից կախվածության ախտամիչի հաղթահարման համար: Ուղղորդելով հաղորդակցության գործընթացը կարելի է անցնել կապակցվածությունից դեպի փոխկապակցվածություն:

5. Համայնքային մակարդակով մասնակցությունը բնավ չի հակադրվում կենտրոնացված կառավարմանը: Կան խնդիրներ, որոնց լուծումը «վերևից» միջամտություն է պահանջում, և կան արտակարգ իրավիճակներ, երբ ամենաարդյունավետ համագործակցության ձևը վարչական հրահանգներն ու նրանց ենթարկվելն է: Ջուգորդելով ուղղահայաց (միևնույն ժամանակ «վերևից՝ ներքև» և «ներքևից՝ վերև») ու հորիզոնական մոտեցումները և ապահովելով հասարակության մասնակցության հնարավորությունը, համայնքային զարգացման գործունը գալիս է ամբողջական դարձնելու հայ հասարակության զարգացման պատկերը:

Հավելվածում՝ որպես մշակված մոտեցման գործնական կիրառում ներկայացված Շիրակի մարզի համայնքային կազմակերպությունների հետազոտության ծրագրի եզրակացություններից և առաջարկություններից հակիրճ՝ առանձնանում է հետևյալը.

- Բնավ չթերազնահատելով արտասահմանյան ֆինանսավորման գործոնը՝ ակնհայտ է, որ համայնքային կազմակերպությունների ստեղծման դրդապատճառ են նախ և առաջ համայնքի ներքին կարիքները:

- Հայաստանում հասարակական կազմակերպությունների զարգացման համար օրենսդրական դաշտի անբարենպաստության բազմաթիվ քննարկումներին որոշակի գործողություններ չեն հետևել: 1999 թ. ընդունված օրենքի 2001, 2005 և 2007 թթ. լրացումներից հետո էական բարելավումներ չեն արձանագրվել:

- Կառուցվածքային ավելի բարձր զարգացում ունեցող կազմակերպությունների շահառուներն ավելի շատ են և ավելի հավասարակշռված է անդամների և կամավորների տոկոսային հարաբերությունը, հետևաբար, ավելի բարձր է նաև նրանց գործունեության պահանջարկը համայնքում:

- Սկսնակ կազմակերպությունների համար նախատեսված համայնքային զարգացման ուսուցման ծրագրերը և գրականությունը չեն բավարարում նրանց պահանջ-

ները. հարկավոր է ավելի խոր և բազմակողմանի ուսուցման ծրագրեր մշակել և համապատասխան գրականություն ստեղծել:

- Համայնքային կազմակերպությունների կարևորագույն խընդիրներից է հաղորդակցային գործընթացի մշակույթի ձևավորումը: Այն հատկապես օգտակար է տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործնական համագործակցության հաստատման գործում:

- Համայնքային կազմակերպությունների դաշտում զարգացման միտումների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար հարկավոր է պարբերաբար համապատասխան հետազոտություններ իրականացնել: Հաշվի առնելով համայնքային զարգացման տեղական առանձնահատկությունները՝ երկրում տեղի ունեցող երևույթի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է ընդլայնել ուսումնասիրության շրջանակը և կազմակերպել քննարկումներ ու փորձի փոխանակում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Кажоян Р. А. *К общей теории общинного развития: модель процесса.* «Вестник общественных наук», 2010, №3 (629) сентябрь - декабрь 2010, Ер. НАН РА, стр. 311-314.

2. Կաժոյան Հ. *Համայնքային զարգացման առաջնորդությունը*, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու 2013, 2 (55), Եր., «Ասողիկ», էջ 267-276:

3. Կաժոյան Հ. *Կամավորության դերը Հայաստանում համայնքային զարգացման գործընթացների մեջ*, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու 2013, 1 (54), Եր., էջ 246-252:

4. Կաժոյան Հ. *Համայնքային կազմակերպությունների դերը համայնքների զարգացման գործընթացում*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, 4 (636), Եր., ՀՀ ԳԱԱ, էջ 143-150:

5. Кажоян Р. А. *Роль коммуникации и организационной культуры в процессах общинного развития и гражданской самоорганизации*, Диалог культур. «Вестник» Ер. гос. лингвистич. университета, 2010, №3, Ер.: «Лингва», Համալսարանական գիտություններ, ՊՐԱԿ 8, էջ 133-138:

6. Kazhoyan H. *A General Theory of Community-building in Its Application in a Multi-ethnic Setting: The Kosovo Case*, Community Development, 2012, No.43/2, London: Routledge, էջ 225-243:

7. Kazhoyan H. *Multicultural Community Building in Kosovo*, Universum Journal: Revistă shkencore, Prishtina: Universum, 2008, №1, էջ 73-81:

Համայնքային զարգացման վերաբերյալ հեղինակը հրատարակել է նաև երկու ուսումնական ձեռնարկ՝

Համայնքային զարգացումը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում, Եր., EditPrint, 2009, և *Հաղորդակցություն սոցիալական փոփոխության համար. Յանցային համագործակցության հիմունքներ*, Եր., Լուսակն, 2004:

Рачия Альбертович Кажоян

Формирование и развитие общин в процессе гражданской самоорганизации армянского общества

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 00.03 «Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы»

Защита состоится 21 июня 2013 года, в 15:00 на заседании специализированного совета 013 ВАК по адресу: 0025, Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

Гражданская самоорганизация является одним из важнейших факторов общественного развития. В процессе решения местных проблем, планирования и реализации социальных изменений, люди и организации объединяются, выявляют и формулируют свои ожидания и потребности в изменении, приобретают опыт сотрудничества и совместной оценки своих возможностей и ресурсов, необходимых для решения проблем. Так создается их способность инициировать и реализовывать устойчивый процесс общинного развития.

Строительство нового общества, основанного на демократических принципах, сопровождается трансформацией социальных и экономических структур. Армения получила возможность участвовать в процессе глобальных техноэкономических преобразований, и сегодня необходимо последовательно исследовать происходящие процессы и разрабатывать подходы на основе как внутреннего, так и накопленного в других странах опыта. **Актуальность исследования** обусловили, во-первых, необходимость адекватных представлений и знаний об общинном развитии; во-вторых, потребность в поддержке культуры общественного участия в местном принятии решений, посредством анализа процессов гражданской самоорганизации и, в-третьих, то обстоятельство, что в процессе глобализации создаются новые формы организаций общинного типа, для планирования и оценки развития которых требуются новые подходы.

На местном уровне, неадекватное законодательство и низкий удельный вес местных бюджетов в общественных затратах и ВВП препятствуют развитию общин – территориально-административных единиц в Армении. В этих условиях общины вынуждены развивать свою способность партисипативного планирования, привлечения внешних финансовых и других средств и рационального использования имеющихся ресурсов.

Объект данного исследования – процесс формирования и развития общин в контексте гражданской самоорганизации армянского общества, а его предметом являются местные особенности, условия возникновения и факторы развития этого процесса. **Исследование имело целью** оказать содействие процессам общинного развития путем разработки теоретических основ и практических рекомендаций для их

оптимизации. В процессе исследования был изучен и систематизирован опыт гражданской самоорганизации в Армении, проведено сравнительное исследование местных и зарубежных научных источников, проанализирован опыт локализации существующих методов. Были решены **такие задачи**, как разработка теоретической концепции и определение особенностей и задач общинного развития в Армении. Апробация положений исследования в рамках специальных курсов и проектов, позволила выработать рекомендации для разработки политики по поддержке процессов общинного развития и для участников этих процессов.

Диссертация состоит из Введения, двух глав: «Общинное развитие в Армении» и «Процесс общинного развития и его основные составляющие», Заключения и Приложения, общий объем: 144 стр.

На Рис.1, представлена разработанная в процессе исследования **модель процесса общинного развития**. Целью и критерием оценки этого процесса является социальное изменение, а лидерство, консолидация, институциональное развитие, планирование и управление ресурсами – это те его основные составляющие, от которых зависит возможность создания стабильного механизма социальных преобразований. Управляя этими факторами можно стимулировать развитие общин, а недооценка или пренебрежение ими влечет за собой риск существенно замедлить или остановить весь процесс.

Рис 1. Интегративная модель процесса общинного развития



Так, теория коммуникации дает возможность выработать практические подходы для преодоления зависимости общины от внешних сил и перехода от зависимости к взаимозависимости, а институциональное развитие укрепляет адаптивно-адаптирующую функцию самоорганизации. При этом, участие на уровне общины не противопоставляется централизованному управлению, ведь есть проблемы, и могут возникать чрезвычайные ситуации, которые требуют выполнение прямых указаний из центра. Развивая вертикальный (одновременно «сверху вниз» и «снизу вверх») и горизонтальный подходы и обеспечивая возможность общественного участия, процесс общинного развития делает картину гражданской самоорганизации современного армянского общества целостной.

Hrachia Albert Kazhoyan

**The formation and development of communities in the process
of civic self-organisation of the Armenian society**

Dissertation for Ph.D. in sociology in the field of
Middle-range Theories, Social Structures, Social Institutes and Processes (00.03)

The defense of the dissertation will take place at 15:00 on 21 June 2013 at the
Meeting of the Specialised Council 013 of the Supreme Certifying Committee of the
Republic of Armenia at the Yerevan State University, 52 Abovian St., 0025, Yerevan

SUMMARY

Civic self-organisation is one of the most important factors of social development. In the process of solving local problems, planning and implementing social change, people and organisations identify and articulate their expectations and needs to be changed, gain experience in co-operation and joint assessment of their capacities and resources. It creates and strengthens their ability to initiate, implement and improve sustainable process of community development at the local level.

In Armenia, the process of building a new society based on democratic principles is going on from the first days of independence. It is accompanied by transformation of social and economic structures. The changes at the global level have opened new frontiers, and the country has the opportunity to participate effectively in the process of the global techno-economic change, but recent events have shown that there are still some old structures and practices impeding the process of democratic development. **The relevance of the research** is substantiated by the need to adequately understand and develop knowledge of community development, the demand to support the culture of participation in local decision-making through the analysis of civic self-organisation processes and the need for new approaches in planning, implementing and measuring the development of new community-type organisations being formed in the process of globalisation.

At the local level, inadequate legislation and share of local budgets in public expenditure inhibit the development of communities – the territorial-administrative units in Armenia. In these circumstances, the communities seek to build their ability for participatory planning, mobilisation and rational use of available financial and other resources.

The object of the research is the process of formation and development of communities in the context of civil self-organisation of Armenian society and **the subject** is local circumstances, conditions and development factors in that process. The study was designed to promote understanding and provide practical support to community-based development by developing a theoretical basis and practical optimisation guidelines for understanding and managing the process. It aimed at reviewing and systematising the experience of civil self-organisation in the regions of Armenia and abroad. To meet that end, a comparative study of

local and foreign scientific literature was conducted, and such problems solved, as the definition of specifics, characteristics, trends and challenges of community building in Armenia, as well as the development of theoretical concepts and the integrative process model of community development.

Testing of the findings and deliverables of the research, discussions and consultations through special training courses and community-building projects resulted in a number of practical recommendations for members of community-based organisations, practitioners and experts in charge of development of national community development policies.

The dissertation is comprised of Introduction, two chapters – *The Community Development Process in Armenia* and *The Community Development Process and Its Main Components*, Conclusion and Annex, 144 p. in total.

Figure 1 represents the **integrative model** of the community building process. The purpose and the hallmark of that process and leadership, consolidation, institutional development, planning, management of resources and accountability are its main components, on which the possibility of creating a stable mechanism for social change depends.

Figure 1. The integrative model of the community development process



Efficiently managed, these factors can stimulate community development, while underestimation or ignorance of each of them entails the risk of slowing down or stopping the process. The theory of communication can provide tools for developing new practical approaches to overcome the dependence of the communities from external forces and move from dependence to interdependence, while the institutional development can strengthen their organisational adaptability. Community-level participation does not oppose to the central planning. There may be problems or emergencies that require guidance or direct intervention from the central level, however, developing vertical (in this case, both "top down" and "bottom up") and horizontal approaches and providing opportunity for public participation, the community development processes make the picture of civic organising in the modern Armenian society complete.